ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՀՀՌՑ-ԳՀԾՁԲ-18/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով

ՀՀՌՑ ՓԲԸ-ի Երևանի հաղորդիչ կենտրոնի վարչական երկրորդ մասնաշենքի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման (Ծառայություն) ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 26.04.2018թ. ժամը 12.00
Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝
Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ/ Հ. Հարությունյանը

Անդամներ՝
Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ/ Վ. Ավետիսյանը
Ռ. Սահակյանը
Գնման Պատասխանատու /Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ/՝ Ա. Գևորգյանը
Հանձնաժողովի քարտուղար՝
Գնման Պատասխանատու /Արցույթի համակարգող՝ ԳՊ/ՄՀմ/ Մ. Նիկոլյանը

1. Տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

Ընդունել ի գիտություն, որ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության /ՀՀՌՑ/ կարիքների համար Երևանի հաղորդիչ կենտրոնի վարչական երկրորդ մասնաշենքի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքերման նպատակով ս.թ. ապրիլի 19-ին էլեկտրոնային ARMEPS համակարգով հայտարարվել է «ՀՀՌՑ-ԳՀԾՁԲ-18/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ /Ընթացակարգ/: Հայտերը բացվել են էլեկտրոնային www.armeps.am կայքի միջոցով ՀՀՌՑ-ի վարչական շենքում, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95 հասցեում, ս.թ. ապրիլի 26-ին, ժամը 12.00-ին:

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները, տվյալները

N	Մասնակցի անվանումը	էլ. փոստի հասցեն	ՀՎՀՀ
1	Հուսալի Կամար ՍՊԸ	husali-kamar@mail.ru	09811047
2	ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն ՓԲԸ	ekspertizaproektov@mail.ru	01508665
3	Արման-Թաման ՍՊԸ	mouradmo@mail.ru	08417115

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

3.1 ՀՀ նախագծերիպետական արտագերատեսչական փորձաքննություն ՓԲ, Արման-Թաման ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված հայտերում առկա են «ՀՀՌՑ-ԳՀԾՁԲ-18/13» ծածկագրով գնանշման հարցման հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

3.2 Հուսալի Կամար ՍՊԸ-ի կողմից որակավորման «Տեխնիկական չափորոշիչ» չափանիշով հավելված N3-ից բացի չի ներկայացվել հրավերով նախատեսված լիցենզիայի (ներդիրների) պատճենները.

4. Մասնակիցների առաջարկած գները, նախահաշվային գինը

ՀՀ դրամ

N	Մասնակիցների անվանումը	1 չափաբաժին		
		Նախահաշվային գինը՝ 1 595 880 ՀՀ դրամ, ներ. ԱԱՀ		
		արժեքը	ԱԱՀ	ընդհանուր գումարը
1	Հուսալի Կամար ՍՊԸ	625000	-	625000
2	ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն ՓԲԸ	244000	48800	292800
3	Արման-Թաման ՍՊԸ	777000	-	777000

5. Հանձնաժողովը որոշեց

5.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 41 կետով՝ հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնել Հուսալի Կամար ՍՊԸ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը 27.04.2018 ժամը 16.30 շտկել սույն արձանագրության 3.2 կետով նշված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվել է 27.04.2018թ. ժամը 16.30

Ընդունել ի գիտություն, որ սույն արձանագրության 3.2 կետով նշված անհամապատասխանությունը Հուսալի Կամար ՍՊ ընկերության կողմից շտկվել է /կցվում է/:

6. Հաշվի առնելով վերոգրյալը հանձնաժողովը որոշեց.

6.1 Ղեկավարվելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն ՓԲԸ-ն, երկրորդ տեղը Հուսալի Կամար ՍՊԸ, երրորդ տեղը՝ Արման-Թաման ՍՊԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

6.2 Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեից կատարել հարցում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

6.3 Գնահատման նիստը հրավիրել ս.թ. մայիսի 5-ին, ժամը 12.00-ին, ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95 հասցեով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

Հանձնաժողովի նախագահ՝		Հ. Հարությունյան
անդամներ՝		Վ. Ավետիսյան
		Ռ. Սահակյան
		Ա. Գևորգյան
քարտուղար՝		Մ. Նիկոլյան